



«Ընտրությունը քոնն է» հասարակական կազմակերպության` 2009թ. մայիսի 31-ի` Երևանի ավագանու ընտրությունների ընթացքում իրականացրած դիտորդական առաքելության արդյունքների վերաբերյալ

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2 հունիսի, 2009

«Ընտրությունը քոնն է» հասարակական կազմակերպությունը (ԸՔ հկ), համաձայն ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման, հավատարմագրվել է` ս.թ. մայիսի 31-ի Երևանի ավագանու ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով: Քվեարկության օրը կազմակերպության կողմից դիտարկումներն անցկացվել են Երևանի բոլոր` 439 ընտրատեղամասերում:

«Ընտրությունը քոնն է» հասարակական կազմակերպության կարծիքով, 2009թ. մայիսի 31-ի` Երևանի ավագանու ընտրությունները, չնայած նախընտրական ժամանակահատվածի համեմատաբար խաղաղ բնույթի և ընտրությունների օրը տեղամասերի զգալի մասում օրենքի շրջանակներում անցած քվեարկությանը և ձայների հաշվարկի, առաջընթաց չարձանագրեց ընտրողների վստահությունը վերականգնելու, նախկին ընտրությունների արդյունքում ժառանգած` հասարակության բևեռացման խորացումը կանխելու, ընտրախախտումների արատավոր պրակտիկան բացառելու, ինչպես նաև ընտրագործընթացներն էապես բարելավելու և դրանք ժողովրդավարական չափանիշներին համապատասխանեցնելու գործում:

ԸՔ հկ գնահատմամբ, մայիսի 31-ի` Երևանի ավագանու ընտրությունների վրա ստվեր գցեցին նախընտրական ժամանակահատվածում և ընտրությունների օրը ընտրակաշառքների վերաբերյալ շրջանառվող լուրերը, աղմինիստրատիվ ռեսուրսի մասամբ օգտագործումը, որոշ քաղաքական ուժերի միջև տեղի ունեցած բախումները, ընտրական հանձնաժողովների անհավասարակշռված ներկայացուցչական կազմը, որոշ լրագրողների, վստահված անձանց և դիտորդների նկատմամբ իրականացված բռնարարները` այսպիսով ավելի խորացնելով ընտրողների հիասթափությունը քաղաքական կուսակցությունների և ընտրական գործընթացների նկատմամբ: Չնայած որ ֆորմալ առումով 2008թ.` տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների համեմատ, որոնք ուղեկցվել էին առավել կոպիտ խախտումներով, մայիսի 31-ի ընտրություններում կարելի է արձանագրել փոքրիկ դրական տեղաշարժ, սակայն բավարար հիմքեր չկան կարծելու, որ այս ընտրությունները հաղթահարել են ժողովրդավարական արդար և թափանցիկ ընտրությունների շեմը:

Բնավ չնսեմացնելով միջազգային դիտորդների դերակատարումը` կցանկանայինք խուսափել վերջիններիս կողմից տրվող շաբլոն գնահատականներից` արդար-անարդար, ազատ-անազատ, և կարծում, որ փոքր դրական տեղաշարժը չի կարող արդարացնել այն հույսերն ու ակնկալիքները, որոնք շարքային ընտրողը սպասում է քաղաքական ուժերից, ընտրական պաշտոնյաներից և, ընդհանուր առմամբ, քաղաքական գործընթացներից:

ԸՔ հկ գնահատմամբ` մայիսի 31-ի` Երևանի ավագանու ընտրությունների ընթացքում ընտրատեղամասերի մի զգալի մասում արտաքնապես խաղաղ, առանց հասարակական կարգի խախտման ակնառու միջադեպերի քվեարկությունը դեռևս չի վկայում ընտրողների գիտակցված, առանց ներազդեցության ընտրությունների կամ անաղարտ ընտրական գործընթացի մասին: Քաղաքացիների զգալի մասի համար ընտրություններին մասնակցությունը վերածվեց գուտ քվեարկելու գործընթացի:

Նախընտրական քարոզարշավի դիտարկումները ցույց տվեցին, որ ընտրողների մի որոշակի հատված Երևանի ավագանու ընտրություններին մասնակցեց թեկնածուներից որոշակի ակնկալիքներ ունենալով, անձնական բնույթի շահագրգռություններից դրդված և ոչ` իրենց համոզմունքի, ծրագրերի վրա հենված քաղաքական դիրքորոշումների, իրենց նախընտրած քաղաքական ուժին ձայն տալու գիտակցությունից մղված:

Կոչ ենք անում իշխանություններին, քաղաքական ուժերին օգտագործել այս ընտրություններում արձանագրված որոշակի դրական տեղաշարժը և միտումները` դրանք հաջորդ ընտրություններին առավելագույնի հասցնելու համար, միաժամանակ մանրակրկիտ ուսումնասիրել տեղ գտած թերությունները, խախտումները, չարաշահումները` հետագայում դրանք բացառելու նպատակով:

Հուսով ենք, որ ընտրական գործընթացի մեջ ներգրավված բոլոր կողմերն ունեն բավարար ներուժ ու կարողություն և, ցանկության դեպքում, կարող են դրսևորել բարի կամք` չստվերելու Հայաստանի նորածին ժողովրդավարության վարկը:

Ներածություն

Երևանի ավագանու ընտրություններ ԶԶ-ում անցկացվեցին առաջին անգամ: Երևանի մասին օրենքի ընդունումով, ըստ ԶԶ Սահմանադրության 2005թ-ին կատարված փոփոխությունների պահանջի, Երևանի քաղաքապետը նշանակվի մարմնից դարձել է ընտրովի:

ԶԶ մայրաքաղաքում կենտրոնացած է ԶԶ բնակչության շուրջ մեկ երրորդը, ուստի Երևանի ղեկավար մարմնի՝ ավագանու անդամների և քաղաքապետի ընտրությունները դադարել են տեղական նշանակության իրադարձություն լինելուց: Քաղաքական ուժերը մեծապես ներգրավված էին Երևանի ավագանու ընտրություններում, որոնք անցկացվել են միայն համամասնական ընտրակարգով, և զգալիորեն լարված քաղաքական պայքարով ուղեկցվող ընտրությունները, ԸՔ հկ գնահատմամբ, ոչ պակաս կարևոր ու նշանակալից էին, որքան համապետական ընտրությունները:

Կազմակերպության երկարաժամկետ դիտորդները դիտարկել են Երևանի ավագանու ընտրությունների պաշտոնական քարոզարշավը: ԸՔ հկ երկարաժամկետ դիտորդների կողմից դիտարկման առարկա են եղել քաղաքական մթնոլորտը, պաշտոնական քարոզարշավը, քարոզչական նյութերը, ընտրական իշխանությունների գործելակերպը, ընտրողների ցուցակները:

Կազմակերպության հավատարմագրված դիտորդների համար անցկացվել են ուսուցումներ: Ընտրությունների օրը դիտարկվել են ընտրական հանձնաժողովների գործողությունները, քվեարկության և ձայների հաշվարկի գործընթացների օրինականությունը, ընտրատեղամասերում տիրող մթնոլորտը, ընտրողների՝ ազատ կամարտահայտության իրավունքի պահպանումը:

Ամփոփում

Պաշտոնական քարոզարշավի դիտարկումների արդյունքում ԸՔ հկ-ն եկել է այն եզրահանգման, որ 2009թ. մայիսի 31-ին կայացած Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզարշավն ընթացել է, նախորդ ընտրությունների համեմատ, զգալիորեն խաղաղ, սակայն ոչ միշտ հավասարակշռված մթնոլորտում: ԸՔ հկ-ն գտնում է, որ քարոզարշավի ընթացքում տեղ գտած բռնարարքները և հակաօրինական գործողությունները, քաղաքակիրթ ընտրապայքարին անհարիր անհանդուրժողականության դրսևորումները՝ մրցակիցների միջև բախումներն ու քարոզարշավների խոչընդոտման դեպքերը, թաղային հեղինակությունների անհարկի միջամտությամբ աղմկահարույց սկանդալները շարքային ընտրողների շրջանում ընտրագործընթացների հանդեպ անվստահություն և անտարբերություն են առաջացրել:

Բռնությամբ, ուժի գործադրմամբ ուղեկցված միջադեպերը որոշակիորեն խորացրել են ընտրությունների հանդեպ հանրային հիասթափությունը, խոչընդոտել ընտրողներին գիտակցված ընտրություն կատարելու նպատակով իրազեկմանը:

ԸՔ հկ-ն արձանագրում է, որ քարոզարշավի կազմակերպման ընթացքում լայնորեն գործադրվել է ադմինիստրատիվ ռեսուրսը: Այսպես, գործող քաղաքապետ Գ. Բեգլարյանի կողմից քարոզարշավը ուղեկցվել է մայրաքաղաքի բոլոր համայնքներում խիստ ակտիվ, արագ տեմպերով և համատարած կերպով ընթացող ասֆալտապատման, աղբահանության և փողոցների լուսավորման աշխատանքներով: Սրանով, ԸՔ հկ գնահատմամբ, նախընտրական քարոզչության ժամանակ թեկնածուները ծառայություններ են մատուցել ընտրողներին, ինչն արգելված է ԶԶ ԸՕ 18-րդ հոդվածի 7-րդ կետով:

Խիստ մտահոգիչ էին նաև ընտրական հանձնաժողովների անդամների տեղերի առուվաճառքի վերաբերյալ ստվերային գործարքները: Սա կասկածի տակ դրեց ընտրական գործընթացները կազմակերպելու և քվեները հաշվելու և ամփոփելու ընթացքում ՏԸԶ անդամների անաչառությունն ու գործողությունների օրինականությունը և նպաստեց ընտրական ադմինիստրացիայի հանդեպ ընտրողների անվստահության խորացմանը: Մտահոգիչ էր նաև հանձնաժողովներում քաղաքական ուժերի ներկայացվածության անհամաչափությունը:

Խրախուսելի էր ընտրողների ցուցակների զգալի ճշգրտությունը, թեև ԸՔ հկ դիտորդների կողմից հայտնաբերվել են տեղ գտած որոշ թերություններ: Դրան նպաստեցին քաղաքացիների համար ընտրացուցակների ճշգրտման գործընթացի մատչելիությունը և լիազոր մարմնի՝ ընտրողների ցուցակների ճշգրտման ուղղությամբ կատարած աշխատանքներն ու դրանց վերաբերյալ հրապարակային հաշվետվությունները:

ԸՔ հկ-ն ողջունում է ԶԶ Սահմանադրական Դատարանի՝ 2009թ. ապրիլի 28-ի որոշումը, ինչով կասեցվեց ԸՕ-ի 10-րդ հոդվածի երրորդ մասի առաջին պարբերության գործողությունը: Ըստ այդմ, ԿԸԶ-ն չէր յալ համարեց ընտրություններին չհաշվառված քաղաքացիների մասնակցության կարգին վերաբերող

դրույթը, ըստ որի նախկինում նրանք կարող էին, դիմում ներկայացնելով բնակության վայրից, ընդգրկվել ընտրողների ցուցակներում: Այսպիսով, օրենսդրորեն կանխվեց ընտրողների ցուցակների արհեստական ուռճացումը և չհաշվառված քաղաքացիների մասնակցությունը Երևանի ավագանու ընտրություններին:

Ընտրողների վերջնական ցուցակների բավարար չափով ճշգրտության մասին է վկայում այն փաստը, որ դատական կարգով իրենց ընտրելու իրավունքը վերականգնել կամ լրացուցիչ ցուցակներով քվեարկել են նվազագույն թվով ընտրողներ:

Վիճահարույց էր զինծառայողների՝ քվեարկությանը մասնակցությունը, ինչը կարգավորել է ԿԸՀ որոշմամբ, որով արգելվել է միայն ժամկետային զինծառայողների քվեարկությունը Երևանի ավագանու ընտրություններին:

Կազմակերպությունը գտնում է, որ ապագա ընտրություններում թյուրըմբռնումներից և օրենքի երկակի մեկնաբանություններից ու դրանցից բխող օրինախախտումներից խուսափելու համար անհրաժեշտ է հստակեցնել ընտրական օրենսդրության՝ զինծառայողների քվեարկությանը վերաբերող դրույթը և այն համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Պաշտոնական քարոզարշավի և քվեարկության օրվա դիտարկումների արդյունքում ԸՔ հկ արձանագրած մտահոգիչ երևույթներն են՝

- քարոզարշավի ընթացքում տեղ գտած բռնության դեպքերը.
- ընտրական հանձնաժողովներում ուժերի բաշխման անհամամասնությունը.
- ընտրողների ցուցակների թերությունները.
- ընթացակարգի և ձայների հաշվարկի ժամանակ արձանագրված խախտումները.
- ընտրողների կամարտահայտության վրա անօրինական ներազդեցության դեպքերը.
- անօրինական քվեարկության դեպքերը.
- ընտրողների կուտակումները և արհեստականորեն ստեղծված հերթերը.
- կողմնակի անձանց ներկայությունը տեղամասային կենտրոններում.
- վստահված անձանց, դիտորդների, ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքների սահմանափակման և բռնության դեպքերը.
- վստահված անձանց իրավունքների չարաշահումը.
- տեղամասային կենտրոնների անհարմարությունները:

Պաշտոնական քարոզարշավի ընթացքում տեղ գտած բռնության դեպքերը

- Մայիսի 11-ին Ավան համայնքում բռնության դեպքեր են արձանագրվել՝ հանրահավաքի մասին իրազեկում կատարող ՀԱԿ-ի ակտիվիստների նկատմամբ: Դեպքի առնչությամբ հարուցվել են քրեական գործեր:
- Մայիսի 12-ին Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքում ժ. 18.30-ին Ավ. Ահարոնյան փողոցում տեղակայված ԲՀԿ նախընտրական շտաբի վրա հարձակում գործած անձինք ծեծի են ենթարկել շտաբի պատասխանատու Սամվել Հովհաննիսյանին: Նույն օրը Ջվարթնոց կինոթատրոնի հարևանությամբ գտնվող ՀՀԿ նախընտրական շտաբի մոտ ուժի գործադրմամբ ընդհարում է տեղի ունեցել ԲՀԿ և ՀՀԿ աջակիցների միջև:
- Մայիսի 18-ին Երևանի Սիլիկյան թաղամասում ԲՀԿ-ի նախընտրական շտաբի մոտ դարձյալ ընդհարում է տեղի ունեցել ԲՀԿ և ՀՀԿ ներկայացուցիչների միջև, ինչը վերածվել է ծեծկռտուքի:
- Շենգավիթ համայնքում արձանագրվել են անհայտ անձանց կողմից ՀԱԿ-ի քարոզչական պաստառները ոչնչացնելու կամ վնասելու դեպքեր:

Ընտրական հանձնաժողովներում ուժերի բաշխման անհամամասնությունը

- Երևանի 8-րդ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում «Ժառանգություն» կուսակցության ներկայացուցիչ Սերյոժա Հարությունյանը Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ համայնքներում ընդգրկված թվով 33 ընտրատեղամասային հանձնաժողովներում «Ժառանգության» տեղերում նշանակել է ԲՀԿ և ՀՀԿ ներկայացուցիչների՝ անտեսելով իր ներկայացրած կուսակցության պահանջը՝ 8-րդ ընտրատարածքի հանձնաժողովներում նշանակելու «Ժառանգության» երաշխավորած մարդկանց ցուցակը:

- Ընտրական հանձնաժողովներում քաղաքական ուժերը անհամաչափ էին ներկայացված: ՏԸՀ-ների ղեկավար կազմերը, մեծամասամբ, ձևավորվել են ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ և ՀՀ Նախագահի ներկայացուցիչներով: Այսպես, օրինակ`
 - Թիվ 2 ընտրատարածքում ներառված 35 ՏԸՀ-ների ղեկավար կազմերում նախագահում էին 11 ՕԵԿ, 5 ՀՀԿ, 5 ԲՀԿ, ՀՀ Նախագահի կողմից նշանակված 6 անձինք (35-ից` 27-ը): Նշված ընտրատարածքի մնացած նախագահներից 8-ն էլ դատական ժառանգողներ էին: Նույն ՏԸՀ-ներում նախագահի տեղակալ էին ՀՀԿ 7, ԲՀԿ 8, ՀՀ Նախագահի նշանակված 9 և ՕԵԿ 5 ներկայացուցիչները, 1-ը միայն ՀՀԿ անդամ էր: Քարտուղարի պաշտոնում ընտրվել էր ՀՀ Նախագահի նշանակված 10, 8 ՀՀԿ, ԲՀԿ 5 և ՕԵԿ 3 ներկայացուցիչ: Արդյունքում` թիվ 2 ընտրատարածքի ՏԸՀ-ների ղեկավար կազմերում ՀՀԿ-ն ներկայացված էր ընդամենը 1 անձով, իսկ «Ժառանգությունը»` ոչ մի:
 - Նման պատկեր էր թիվ 5 ընտրատարածքի թվով 17 ՏԸՀ ղեկավար կազմերում: Դրանք ձևավորվել էին հիմնականում ՀՀԿ (9 նախագահ, 5 նախագահի տեղակալ, 3 քարտուղար), ԲՀԿ (4 նախագահ, 4 նախագահի տեղակալ, 5 քարտուղար), ՕԵԿ (3 նախագահ, 6 նախագահի տեղակալ, 5 քարտուղար) ներկայացուցիչներով: Թիվ 5 ընտրատարածքի ՏԸՀ-ների ղեկավար կազմերում ՀՀԿ-ն ներկայացված էր ընդամենը 7 անդամով (1 նախագահ, 2 նախագահի տեղակալ, 4 քարտուղար): «Ժառանգությունը» դարձյալ ՏԸՀ ղեկավար կազմում չէր ներկայացված:
 - Թիվ 1 ընտրատարածքի 19 ՏԸՀ-ների ղեկավար կազմերում գերակշռում էին ՀՀԿ ներկայացուցիչները: Հանձնաժողովներում ընդգրկված 25 ՀՀԿ անդամներից 11-ը ՏԸՀ նախագահներ էին, 5-ը` նախագահի տեղակալներ, 9-ը` քարտուղարներ: Նույն ընտրատարածքի ՏԸՀ-ների ղեկավար կազմերում ԲՀԿ-ն ներկայացված էր 15 (3 նախագահ, 5 նախագահի տեղակալ, 7 քարտուղար), ՕԵԿ-ը` 14 (4 նախագահ, 7 նախագահի տեղակալ, 3 քարտուղար), իսկ ՀՀԿ-ն` ընդամենը 3 (1 նախագահ և 1 նախագահի տեղակալ) անդամով: «Ժառանգության» ոչ մի ներկայացուցիչ թիվ 1 ընտրատարածքի ՏԸՀ-ների ղեկավար կազմերում չէր ընդգրկվել:
- Թիվ 10/2 ՏԸՀ առաջին նիստը ընթացել է ընթացակարգի խախտմամբ: Նախ ՏԸՀ նիստի կողմից 6 կողմ, 1 ձեռնպահ ձայնով ՏԸՀ նախագահ է ընտրվել ՕԵԿ-ը ներկայացնող ոմն Նունե, որն ընտրվելուց հետո մի որոշ ժամանակ անց հեռախոսազանգ ստանալով հայտարարել է, որ իրեն սխալ են գրանցել, և որ ինքը պետք է գնա թիվ 10/3 տեղամաս: Այնուհետև թիվ 10/2 ՏԸՀ անդամները բավական երկար ժամանակ բանակցելով տեղամասում ելումուտ անող` տարբեր կուսակցություններ ներկայացնող կողմնակի անձանց հետ, որպես ՏԸՀ նախագահ են ընտրել ավելի ուշ տեղամասային կենտրոն ժամանած Ջիվան Սանոսյանին, որը այդ պահին առանց լիազորագրի ներկայացել է` իբրև ՕԵԿ անդամ:
- Թիվ 11/16 ՏԸՀ նախագահը, ըստ ԸՔ հկ երկարաժամկետ դիտորդի ուսումնասիրությունների, բավարար կերպով չի տիրապետել ԸՕ դրույթներին, լավ տեղեկացված չլինելով` չի կարողացել կողմնորոշվել տեղամասը կահավորելիս և այլն:
- Թիվ 11 ԸԸՀ-ն, ԸՔ հկ երկարաժամկետ դիտորդի վկայությամբ, անմատչելի է եղել դիտարկումների ընթացքում և, բնականաբար, դիտորդը հնարավորություն չի ունեցել ժամանակին անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ ԸԸՀ-ից: Մայիսի 18-ից 26-ը դիտորդն ամեն օր տարբեր ժամերի ժամանել է 11-րդ ԸԸՀ-ի նստավայր, սակայն այն փակ է եղել, ինչը խոսում է ԸԸՀ անգործության մասին:
- Թիվ 6 ԸԸՀ-ում հրաժարվել են ԸՔ հկ երկարաժամկետ դիտորդին տրամադրել 6-րդ ընտրատարածքում ընդգրկված ՏԸՀ-ների` ս.թ. մայիսի 9-ին ընտրված ղեկավար կազմերի և նրանց կուսակցական պատկանելիության վերաբերյալ տեղեկատվությունը: ԸՔ հկ դիտորդի բազմակի հարցումներին ի պատասխան թիվ 6 ԸԸՀ քարտուղար, ԲՀԿ ներկայացուցիչ Գայանե Մարտիրոսյանը անգամ մայիսի 29-ին, նախ, պնդել է, որ ՏԸՀ-ների ղեկավար կազմերի վերաբերյալ տեղեկատվությանն իրենք չեն տիրապետում, ապա դարձյալ հրաժարվել է տվյալները հատկացնել դիտորդին` պատճառաբանելով, թե այդ ինֆորմացիան գաղտնի է ՁԼՄ-ների, վստահված անձանց և դիտորդների համար: Այսպիսով, ԸԸՀ քարտուղարը կոպտորեն խախտել է ՀՀ ԸՕ 30-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, ըստ որի դիտորդը, ՁԼՄ ներկայացուցիչը իրավունք ունեն «անարգել ծանոթանալ տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերի նմուշներին, ընտրական

հանձնաժողովների որոշումների, նիստերի արձանագրություններին, ստանալ դրանց պատճենները, կատարել քաղվածքներ»:

Անօրինական քվեարկության դեպքերը

- Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 7/01, 8/03, 8/05, 8/07, 8/28 տեղամասերում օրվա երկրորդ կեսին կատարվել են քվեաթերթիկների լցոնումներ: Լցոնումները կատարվել են այն պահին, երբ քվեարկողների մեծ խմբեր են մուտք գործել նշված տեղամասային կենտրոններ և առաջացրել են ընտրողների խռոշ կուտակումներ և անկառավարելի վիճակ:
- Թիվ 13/18 տեղամաս ժամը 17:00-ին ներխուժած մի քանի անհայտ անձինք փորձել են քվեաթերթիկների լցոնում կատարել: ՏՀՀ նախագահը կանխել է լցոնումը: Ձայների հաշվարկի ժամանակ արձանագրվել է անհամապատասխանություն քվեարկության մասնակիցների և մարված ու ստացված քվեաթերթիկների թվի միջև: Հայտնաբերվել է, որ 70 քվեաթերթիկ պակասում է, ինչը վկայում է քվեաթերթիկների առևանգման փաստի մասին:
- Թիվ 13/01 տեղամասում ժամը 19:50-ին ՏՀՀ նախագահի կողմից կանխվել է քվեարկելու եկած ընտրողի կողմից ՀՀԿ օգտին քվեաթերթիկների լցոնման փորձը:
- Թիվ 13/10 տեղամասում մի ընտրող փորձել է կրկնակի քվեարկել: Դա կանխվել է ՏՀՀ՝ քվեարկության ծրարները կնքող անդամի կողմից:
- Թիվ 4/39 տեղամասում բազմիցս արձանագրվել են միևնույն քվեախցում 2 ընտրողի միաժամանակյա քվեարկության դեպքեր:
- Աջափնյակի թիվ 6/10 տեղամասում ՏՀՀ քարտուղարը քանիցս ընտրողների ցուցակում ստորագրել է տեղամաս չներկայացած ընտրողների փոխարեն:
- Ավանի թիվ 1/10 տեղամասում չհաշվառված անձինք փորձել են անօրինաբար քվեարկել, ինչը կանխվել է ՏՀՀ նախագահի կողմից:
- Աջափնյակի թիվ 6/01 տեղամասում ժամը 15:00-ի սահմաններում ուն Վլադիմիր Վարդանյան քվեարկություն է իրականացրել Մելսիդա Նազարյանի անձնագրով: Պարզվել է, որ Մ. Նազարյանը նույն թիվ 6/01 տեղամասում ՕԵԿ վստահված անձն է: Անօրինական քվեարկության փաստը հայտնաբերել է տեղամասում ՀՅԴ վստահված անձը, ում պահանջով ստուգվել է երիտասարդ տղամարդու անձը հաստատող փաստաթուղթը և պարզվել կեղծիքը:
- Թիվ 9/28 տեղամասում Մհեր Ամիրյանի անձնագրով քվեարկել է այլ անձ: Անձը հաստատող փաստաթուղթը ստուգելուց հետո ՏՀՀ քարտուղարն արձանագրել է անօրինական քվեարկության փաստը:
- Աջափնյակի թիվ 9/28 տեղամասում ընտրողների ցուցակում 1296 համարակալված Հենրիկ Գասպարյանը, տեղամաս ժամանելով, իր անվան դիմաց ստորագրություն է հայտնաբերել: ՏՀՀ-ն պատճառաբանել է, թե իբր մինչ այդ նույն տեղամասում իր քվեարկությունն իրականացած Հ. Գասպարյանի կինն է սխալմամբ միաժամանակ իր և իր ամուսնու փոխարեն ստորագրել:
- Արաբկիրի թիվ 5/25 տեղամասում ժամը 10:30-ի սահմաններում քվեարկելու եկած մի ընտանիքի հինգ անդամներ ընտրողների ցուցակում իրենց անունների դիմաց անձանոթ ստորագրություններ են հայտնաբերել: ՏՀՀ-ն պատճառաբանել է, թե իբր այլ ընտրողներ են սխալմամբ ստորագրել իրենց անվան դիմաց:
ՏՀՀ-ն, ստեղծված իրավիճակից ելք գտնելու համար, խախտելով ընտրական օրենսդրությունը, տվյալ անձանց անուններն ավելացրել է լրացուցիչ ցուցակներում և թույլ տվել քվեարկել:
- Թիվ 9/03 տեղամասում քվեարկելու եկած երկու քույր ընտրողների ցուցակում իրենց անվան դիմաց անհայտ ստորագրություններ են հայտնաբերել, ինչի պատճառով վիճաբանել են ՏՀՀ-ի հետ: Վեճը վերածվել է իրարանցման և քառսային իրավիճակի, և այս ամենին ներկա շատ ընտրողներ, առանց քվեարկելու, լքել են տեղամասը:
- Թիվ 9/05 տեղամասում բաց քվեարկություն է իրականացվել: Քվեախցիկները տեղակայված են եղել այնպես, որ ընտրողը մեջքով կանգնած է եղել դեպի հանձնաժողովը, և վերջինս դուրսին կերպով

դիտարկել է քվեարկության արդյունքները: Քվեախցերը շրջվել են դեպի պատը միայն այն ժամանակ, երբ տեղամասում ներկա են եղել ՁԼՄ ներկայացուցիչներ:

- Թիվ 9/12 տեղամասում ավտոմեքենաներով քվեարկելու բերված, կողմնակի անձանց օգնությամբ մի կերպ տեղաշարժվող շուրջ 30 գառամյալ ընտրողների քվեարկությունն իրականացվել է բաց կերպով, ՏՀՀ անդամների սեղաններին:
- Քանաքեռ-Զեյթունի թիվ 3/06 տեղեմասում ձայների հաշվարկի ժամանակ հայտնաբերվել է քվեարկության դատարկ ծրար, ինչն իրականացված «կառուսել-քվեարկության» կասկածի տեղիք է տվել:

Ընտրողների ցուցակների թերությունները

- Թիվ 5/20 ընտրատեղամասի ընտրողների ցուցակում հայտնաբերվել է տվյալ հասցեում չհաշվառված անհայտ անձի անուն: Արաբկիրի Փափագյան փ. 21/2-40 հասցեում ստացվել է լիազոր մարմնի ծանուցումը ոմն Ազնիվ Օսիպի Ամիրյանի անունով, որը տվյալ հասցեում երբեք հաշվառում չի ունեցել:
- Ընտրողների նախնական ցուցակների զգալի մասը պատռվել կամ ոչնչացվել է Երևանի մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետում տեղակայված տեղամասում, ուստի ընտրողներն այստեղ հնարավորություն չեն ունեցել իրենց անունը ճշտելու:
- Թիվ 9 և 10 ընտրատարածքներում ընդգրկված որոշ` հատկապես կրթօջախներում տեղակայված տեղամասերում (օրինակ` թիվ 10/02, 9/17) ընտրողների ցուցակները կեսօրից հետո անստացելի են եղել ընտրողների համար, քանի որ Ժ.14:00-ից այդ հաստատությունների դռները կողպվել են:
- Թիվ 2 ընտրատարածքում ընդգրկված Ջուղայի 5 հասցեագրված վթարային շենքի թվով 130 ընտրողներ մեկ տարի առաջ նոր բնակարաններ են ստացել Հարավ-Արևմտյան թաղամասում և դուրս են եկել նախկին հաշվառումից, սակայն նրանց անունները դարձյալ ընդգրկված են եղել նախնական ընտրացուցակներում:
- ՀՀ ՊՆ իրավասության ներքո գտնվող Մոլդովական 32/1 հասցեագրված բազմաբնակարան շենքում կա ընդամենը 17 բնակարան, սակայն ընտրողների նախնական ցուցակներում հայտնվել են նշված հասցեի բնակարաններում հաշվառված 149 անձանց անուններ:
- Նոր Նորքի 3/34 ընտրատեղամասի ընտրողների նախնական ցուցակներում հայտնվել են հորինված անունով հասցեներ: Գոյություն չունեցող «Դավիթ Բեկ հարակից տարածք» անհայտ հասցեում չհամարակալված բնակարաններում հայտնվել են մեծ թվով ընտրողների անուններ:

Վերջնական ցուցակների անճշտությունները

- Արաբկիրի թիվ 5/20 տեղամասի ընտրողների վերջնական ցուցակներում հայտնաբերվել են մահացած անձանց` 1922թ. ծնված Խալաթ Արտեմի Աթոյանի, 1928թ. ծնված Աղավնի Պողոսի Խաչատրյանի և 1931թ. ծնված Ազնիվ Օսիպի Ասիրյանի անունները:
- Դավիթաշենի թիվ 5/14 տեղամասի ընտրողների վերջնական ցուցակում հայտնաբերվել է երեք տարի առաջ մահացած Վարուժան Արմենակյանի անունը: Փաստը հայտնաբերել է նշված անձի հայրը, որ տեղամաս գալով քվեարկելու` ցավով հայտարարել է, որ, չնայած իր բազմաթիվ զգուշացումներին, վերջին տարիների ընտրություններին իր հանգուցյալ որդու անունը հայտնվում է ընտրողների ցուցակներում:
- Դավիթաշենի թիվ 5/4 տեղամասի ընտրողների ցուցակներում բացակայել են այստեղ քվեարկելու իրավունք ունեցող որոշ անձանց անուններ: ՏՀՀ-ն նրանց, իրենց ընտրելու իրավունքը վերականգնելու նպատակով, տեղեկանքներ է հատկացրել միայն ԸՔ հկ դիտորդի բացատրական աշխատանքից հետո:
- Թիվ 10/09 տեղամասի ընտրողների ցուցակում մի շարք ընտրողներ հայտնաբերել են իրենց հասցեների ներքո հաշվառված անհայտ անձանց անուններ: Այդ անունները, ընտրողների

վկայությամբ, վերջին մի քանի ընտրություններին շարունակ հայտնվում են իրենց հասցեներում, թեև այդ մասին նրանք բազմիցս իրենց բողոքն են հայտնել:

- Թիվ 10/25 տեղամասում հայտնաբերվել է մեկ տարի առաջ մահացած Վերա Հովհաննիսյանի անունը:
- Թիվ 10/31 տեղամասի ընտրողների ցուցակներում իրենց անունները չեն գտել քվեարկելու եկած, այդտեղ քվեարկելու իրավունք ունեցող 5 ընտրողներ, սակայն ՏՀ նախագահը ոչ մի քայլ չի ձեռնարկել նրանց ընտրելու իրավունքը վերականգնելու ուղղությամբ և չի տվել ոչ մի բացատրություն:
- Թիվ 10/32 տեղամասի ընտրողների ցուցակներում հայտնաբերվել են անհայտ, որոշ հասցեներում հաշվառում չունեցող անձանց անուններ: ԸՔ հկ դիտորդի ցանկությունը՝ ճշտելու դեպքի մանրամասները, ՏՀ նախագահի կողմից որակվել է՝ իբրև հանձնաժողովի աշխատանքներին միջամտելու և խանգարելու փորձ:

Ընթացակարգի և ձայների հաշվարկի ժամանակ արձանագրված խախտումները

- Թիվ 13/02 տեղամասում երկու ընտրող քվեարկել են՝ առանց քվեարկության ծրարը ՏՀ անդամի կողմից կնքելու:
- Նոր Նորքի թիվ 2/23 ՏՀ-ից ԸՀ ուղարկված՝ փաստաթղթերի պարկը վնասված է եղել, ինչի վերաբերյալ ԸՀ-ում կազմվել է արձանագրություն:
- Թիվ 2/04 տեղամասային կենտրոնը փակվելուց հետո ՏՀ-ի՝ ընտրությանը մասնակցած ընտրողների ԿՀ-ին հայտնած թիվը եղել է 1689:

Սակայն ձայների հաշվարկի ժամանակ պարզվել է, որ ընտրողների ցուցակում ստորագրությունների թիվը 886 է: Քվեատուփից հանվել է 1183 քվեաթերթիկ (ձայները բաշխվել են հետևյալ կերպ. ԲՀԿ՝ 410, ԺԿ՝ 22, ՀԱԿ՝ 136, ՀՅԴ՝ 49, ՀԱՄԿ՝ 8, ՀՀԿ՝ 215, ՕԵԿ՝ 330): Ձայների հաշվարկի վերաբերյալ արձանագրությունն իրենց ստորագրություններով վավերացրել են միայն ՏՀ նախագահը և տեղակալը: ՏՀ մյուս անդամները, ապա և ԸՀ-ն հրաժարվել են ընդունել բացահայտ անհամապատասխանություններ պարունակող ձայների հաշվարկի արդյունքները:

- Թիվ 11/22 տեղամասում ձայների հաշվարկի արդյունքում պարզվել է, որ ընտրողների ցուցակում ստորագրությունների թիվը 1-ով պակաս է, ինչի վերաբերյալ կազմվել է արձանագրություն:
- Թիվ 10/25 տեղամասում ժամը 13:25-ին ՏՀ-ն ընտրողին է հատկացրել գրիչով նշում ունեցող քվեաթերթիկ: Ընտրողը սեփական նշագրումը կատարելուց հետո միայն նկատելով, որ իր քվեաթերթիկն անվավեր է, դիմել է ՏՀ-ին՝ իրեն նոր քվեաթերթիկ հատկացնելու պահանջով:
- Թիվ 10/27 տեղամասում ժամը 10:50-ին ԸՔ հկ դիտորդն անհամապատասխանություն է հայտնաբերել քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի և իր իսկ կատարած հաշվարկների միջև, ինչի մասին հայտնել է ՏՀ-ին:
- Թիվ 10/29 տեղամասում քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո ՏՀ-ում ԲՀԿ անդամի պահանջով վերահաշվարկվել են ՕԵԿ-ին կողմ քվեարկված քվեաթերթիկները: Վերահաշվարկի արդյունքում պարզվել է, որ այդ քվեաթերթիկներից չորսն իրականում նշագրված է եղել ՀԱՄԿ-ի օգտին: ՏՀ-ում ՕԵԿ ներկայացուցիչը բացահայտ կերպով հայտարարել է, որ ինքը «լավ է արել», ինչի արդյունքում տեղամասում վեճ է ծագել:
- Ավանի թիվ 1/15 և 1/10 ՏՀ-ները, ընտրատեղամասերը փակվելուց հետո ձայների հաշվարկն անմիջապես սկսելու փոխարեն մեկ ժամ ընդմիջել են իրենց աշխատանքը:
- Քանաքեռ-Զեյթունի թիվ 3/18 տեղամասում ձայների հաշվարկը մեկուկես ժամով ընդհատվել է ՏՀ անդամների և վստահված անձանց միջև ծագած վիճաբանության պատճառով: Վիճաբանությունն սկսվել է երեք քվեաթերթիկ անվավեր ճանաչելու՝ ՏՀ անդամների որոշման և դրա վերաբերյալ վստահված անձանց հակառակ պնդումների առնչությամբ:

Ընտրողների կամարտահայտության վրա անօրինական ներագդեցության դեպքերը

- Նոր Նորքի թիվ 3/31, 3/34, 3/35 տեղամասերում քվեարկության գործընթացի մեկնարկից սկսած անընդմեջ ընտրողների քվեարկության գործընթացը նկարահանվել է «Կենտրոն» հեռուստաընկերության կողմից (տեսախցիկները վստահված անձանց հատկացված դիտակետից նկարահանել են քվեարկողի մոտ քվեարկողներին): Սա կատարվել է ԸՕ պահանջների խախտմամբ: ԸՕ 47-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ վստահված անձանց, դիտորդների, ՁԼՄ-ների ներկայացուցիչների կողմից կարող է անարգել տեսանկարահանվել միայն քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը:

ՁԼՄ-ի այս գործելակերպը ԸՔ հկ կողմից գնահատվում է՝ իբրև ընտրողների անձանց հաշվառում և նրանց կամքի վրա անուղղակի ներազդեցություն:

- ՀՀԿ-ի և ԲՀԿ-ի կողմնակիցների կողմից քվեարկության օրն արգելված քարոզչություն իրականացնելով ավտոմեքենաներով զանգվածաբար ընտրողներ են բերվել Աջափնյակի, Շենգավիթի, Մալաթիա-Սեբաստիայի տեղամասային կենտրոններ: Նույն անձանց կողմից վերահսկվել է իրենց կողմից տեղամաս բերված անձանց քվեարկությունը: Նրանք հաշվառում էին իրենց բերած ընտրողների ձայները՝ որպես իրենց ներկայացրած քաղաքական ուժին կողմ տրված ձայներ:

Ընտրողների մեծ խմբերի միաժամանակյա մուտքը տեղամասային կենտրոններ հաճախ ստեղծել է հերթեր, խառնաշփոթ, անգամ՝ անկառավարելի վիճակ:

- Թիվ 9/04, 9/05 տեղամասային կենտրոններում անհայտ անձինք՝ մի խումբ երիտասարդներ, խախտելով ընտրողների գաղտնի քվեարկելու իրավուքը, վերահսկել են քվեարկության արդյունքները:

- Աջափնյակի տեղամասային կենտրոններին անմիջապես հարող տարածքներում կանաչ վերնաշապիկներով զգեստավորված անձինք, որ ներկայացել են որպես ԲՀԿ ներկայացուցիչներ, վերահսկել են ընտրողների մուտքը տեղամասային կենտրոններ, հաշվառում են կատարել՝ իրենց իսկ վկայությամբ՝ հավաստիանալու համար, որ իրենց ընտրողները ներկայացել են քվեարկության: Այսպես, թիվ 100 դպրոցի դիմաց վերահսկողություն իրականացնող կանաչ զգեստավորված ԲՀԿ-ականներին քվեարկողների վերաբերյալ պարբերաբար հաշվետու են եղել այդ դպրոցում գործող թիվ 6/12 և 6/13 ՏՀՀ-ներում ԲՀԿ-ն ներկայացնող անդամները:

- Աջափնյակի թիվ 6/10 տեղամասային կենտրոն ընտրողները բերվել են հոծ խմբերով, ավտոմեքենաներով: Նրանց մուտքը տեղամասային կենտրոններ վերահսկել են կողմնակի անձինք, որոնք ընտրողներին, հատկապես մեծահասակներին օգնելու պատրվակով քվեախցիկ են ուղեկցել և բացահայտ հուշել, որ քվեարկեն քվեաթերթիկում նշված 6-րդ համարի օգտին:

- Կենտրոն համայնքի թիվ 10/16 տեղամասում ժամը 13:00-14:00-ի սահմաններում ԸՔ հկ շրջիկ դիտորդի ներկայությամբ երեք կողմնակի անձինք ակտիվորեն կազմակերպել են ընտրողների հոծ խմբերի մուտքը տեղամասային կենտրոններ և, ակտիվորեն քարոզչություն իրականացնելով ՀՀկ օգտին, առաջնահերթ կազմակերպել և ուղղորդել են նրանց քվեարկությունը, թեև տեղամասում արդեն օրենքով սահմանված թվով ընտրողներ կային:

Արդյունքում ստեղծվել են ընտրողների կուտակումներ, իրավիճակը ՏՀՀ նախագահը չի վերահսկել: Վերջինիս գործառույթները, փաստորեն, իրականացրել են ընտրողներին ուղեկցող կողմնակի անձինք, որոնք բառացիորեն այստեղ տեր ու տնօրեն են դարձել:

- Թիվ 10/22 տեղամասում՝ դիտորդներին դիտարկումների համար հատկացված վայրում գտնվել են երեք ոչ իրավասու անձինք, որ այդ թաղամասի բնակիչներ էին և ՀՀԿ համակիրներ: Նրանք անընդմեջ շփվել են տեղամաս ժամանող տեղի բնակիչների հետ, հատկապես երիտասարդներին ուղղորդել, թե ում օգտին քվեարկեն:

- Թիվ 10/25 տեղամասում ներկա մի այլ ընտրող ժամը 11:50-ին ի պատասխան մի ընտրողի՝ իրեն օգնելու խնդրանքին, տեղամասում ներկա մի ընտրող բացահայտ կերպով հուշել է՝ քվեարկել 6-րդ համարի օգտին: Հուշարարությունը չի կանխվել ՏՀՀ-ի կողմից:

Ընտրողների կուտակումները և արհեստականորեն ստեղծված հերթերը

- Ընտրողների խոշոր կուտակումներ են արձանագրվել թիվ 4/39, 10/08, 9/01, 9/02, ժամը 14:30-ից սկսած՝ թիվ 11/03, 11/04, 11/31, 11/32, 11/33 12/06, 12/10, 12/11, 12/12, 12/15, 12/16, 12/17, 12/20, 12/21, 12/26, Մալաթիա-Մեքսստիայի բազմաթիվ տեղամասային կենտրոններում:
- Թիվ 9/04, 9/05 տեղամասային կենտրոններում ընտրողների թիվը ժամը 12-ի, 13-ի սահմաններում անցել է 50-ից:
- Ավանի թիվ 1/03 տեղամասային կենտրոն ժամը 11:30-ին երկու ավտոբուսով ժամանել են այդ տեղամասում քվեարկելու իրավունք ունեցող 40-50՝ ազգությամբ եզդի ընտրողներ: Նրանց հոծ խմբով տեղամասային կենտրոն ուղեկցող անձը պնդել է նրանց միաժամանակյա ներկայությունը տեղամասում, ինչի պատճառով որոշ ժամանակով աղմուկ և կուտակումներ են առաջացել: ՏՀՀ նախագահի՝ բացատրական աշխատանք տանելուց հետո հաջողվել է ընտրողներին դուրս հրավիրել տեղամասից և կարգավորել իրավիճակը:
- Ընտրողների խոշոր կուտակումներ տեղամասը բացվելուն պես առաջացել են Կենտրոնի թիվ 9/05 տեղամասում: Ընտրողների մեծ խմբերի մուտքը տեղամասային կենտրոն ստեղծել է աղմուկ և կուտակումներ:
- Դավիթաշենի թիվ 5/10 տեղամասային կենտրոնում ժամը 15:30-ի սահմաններում ընտրողների հոսքը շատացել է, ինչի պատճառով առաջացել են հերթեր և անկառավարելի վիճակ: Դիտորդներն ու վստահված անձինք դժվարությամբ են այդ խառնաշփոթում դիտարկումներ կատարել: ՏՀՀ-ն չի կարգավորել ընտրողների հոսքը, չի պահպանել ըստ օրենքի տեղամասում 15-ից ոչ ավելի ընտրողների ներկայությունը:

Կողմնակի անձանց ներկայությունը տեղամասային կենտրոններում

- ՀՀ ոստիկանության 4-5 ներկայացուցչի մշտական, անհարկի ներկայություն է արձանագրվել Կենտրոն համայնքի թիվ 9/05 տեղամասային կենտրոնում:
- Նույն տեղամասում մշտապես ներկա են գտնվել կողմնակի անձինք, որոնք վերահսկել են ընտրողների քվեարկությունը և ներագդել այստեղ կուտակված ընտրողների կամարտահայտության վրա:
- ԱԺ-ում ԲՀԿ խմբակցության մի շարք ներկայացուցիչներ ԲՀԿ համամասնական ցուցակում ընդգրկված անձանց ուղեկցությամբ ժամը 17-ից սկսած շրջել են Նոր Նորքի 5-րդ զանգվածում տեղակայված ընտրատեղամասային կենտրոններում, և նրանցում 10-15 րոպե շրջելով, ԸՀ-ներից ընտրագործընթացների ընթացքի վերաբերյալ տեղեկություններ են հավաքել:
 - Թիվ 9/28 տեղամասային կենտրոնում տևականորեն ներկա գտնվող կողմնակի անձինք քարոզչություն են իրականացրել:
 - Դավիթաշենի թիվ 5/16 տեղամասում մի անհայտ երիտասարդ, ներկայանալով իբրև ՋԼՄ ներկայացուցիչ, փորձել է նկարահանումներ կատարել՝ ընդհուպ մոտենալով քվեատուփին: Անձը հաստատող փաստաթուղթը ստուգելու ՏՀՀ պահանջը լսելով՝ երիտասարդը դիմել է փախուստի:
 - Թիվ 9/12 տեղամասում շարունակաբար ելումուտ են արել կողմնակի անձինք, որոնք ընտրողների ցուցակներում ստուգել են իրենց հետաքրքրող ընտրողների ստորագրությունների առկայությունը:

Վստահված անձանց, դիտորդների, ՋԼՄ ներկայացուցիչների իրավունքների սահմանափակման և բռնության դեպքերը

- Թիվ 4/39 ՏՀՀ-ն «ԱԼՄ» հեռուստաընկերությունը ներկայացնող խմբին արգելել է նկարահանել տեղամասային կենտրոնում առաջացած ընտրողների խոշոր կուտակումները:
- Կենտրոն համայնքի թիվ 9/01 տեղամասային կենտրոնում ժամը 10:00-ի սահմաններում, ի պատասխան «4-րդ իշխանություն» օրաթերթի աշխատակից Գոհար Բեգիրյանի՝ տեղամասում

քվեարկող ԱԺ պատգամավոր Լևոն Սարգսյանին ուղղված՝ իրեն հարցազրույց տալու պնդումներին, պատգամավորի թիկնապահները, բռնի ուժ գործադրելով, քաշքշել են լրագրողին:

- Կենտրոնի թիվ 9/05 ՏՀՀ անդամները ՏՀՀ նախագահի հրահանգով արգելել են ԸՔ հկ դիտորդին ազատ տեղաշարժվելով դիտարկումներ կատարել: Մինչ քվեարկության բուն գործընթացի սկիզբը ԸՔ հկ դիտորդին չի հաջողվել մուտք գործել տեղամասային կենտրոն՝ նրա մուտքի մոտ արդեն ժամը 07:15-ից սկսած կողմնակի անձանց և ՀՀ ոստիկանության բազմաթիվ աշխատակիցների կուտակման պատճառով: ԸՔ հկ դիտորդին չի հաջողվել դիտարկել ՏՀՀ գործողությունները մինչև տեղամասային կենտրոնի բացվելը: Այստեղ մուտք գործելուց հետո էլ դիտորդին և վստահված անձանց թույլ են տվել միայն 5 մետր հեռավորությունից դիտարկել ՏՀՀ անդամների գործողությունները, արգելել են մոտիկից դիտարկել քվեատուփը, քվեատուփի համար պատասխանատու անձի գործողությունները, որին ՏՀՀ նախագահը շարունակաբար հրահանգներ է տվել:
- Աջափնյակի թիվ 6/01 ՏՀՀ-ն խոչընդոտել է որպես միջազգային դիտորդ ներկայացած Լյուկ Վանդիայի դիտարկումները՝ փորձելով դիտորդից խլել նրան պատկանող տեսախցիկը: ՏՀՀ գործելակերպին ընդդիմացող դիտորդին բռնի կերպով հեռացրել են տեղամասային կենտրոնից:
- Նոր Նորքի թիվ 2/16 ՏՀՀ նախագահը վիճաբանել է ՀԱԿ-ի վստահված անձի հետ՝ «Ազատություն» ռադիոկայանի թղթակցին հարցազրույց տալու համար:
- Նոր Նորքի թիվ 2/03 տեղամասում ընտրողների՝ տեղամասային կենտրոն մեծ խմբերով մուտք գործելու և կուտակվելու փաստի դեմ բողոքող ՀԱԿ վստահված անձի և ՏՀՀ անդամների միջև վիճաբանություն է ծագել:

Վստահված անձանց իրավունքների չարաշահումը

- Աջափնյակի թիվ 6/10 տեղամասում ՀՀԿ վստահված անձը քվեարկողներին հուշել է՝ ում օգտին քվեարկել: ՏՀՀ նախագահը վստահված անձի անօրինական քարոզչությունը կանխել է միայն ԸՔ հկ դիտորդի զգուշացումից հետո:
- Արաբկիրի թիվ 5/20 տեղամասային կենտրոնում ժամը 11:30-ին շրջող ՀՀԿ վստահված անձ Արմեն Երիցյանը այլ մարդու հանձնել է վստահված անձի վկայական, որը լրացրել է հենց տեղում՝ նշելով տվյալ անձի տվյալները: ԸՔ հկ դիտորդի վկայությամբ, Ա. Երիցյանի մոտ եղել է վստահված անձի չլրացված վկայականների մի ամբողջ տրցակ:

Տեղամասային կենտրոնների անհարմարությունները

- Նորք-Մարաշի բոլոր տեղամասային կենտրոններում ընդհուպ մինչև մայիսի 9-ը չէին փակցված տեղամասերի համարները մշող ցուցանակները:
- Թիվ 9/04, 9/05 տեղամասերում քվեարկության խցիկները տեղադրված են եղել այնպես, որ ընտրողը քվեարկելիս գտնվել է թիկունքով դեպի հանձնաժողովը, ինչը հնարավորություն է ընձեռել ՏՀՀ-ին դիտարկելու բուն քվեարկությունը: Խախտվել է քվեարկության գաղտնիությունն ապահովող ԸՕ 48-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը, ըստ որի ընտրողը քվեարկելիս պետք է գտնվի հանձնաժողովին դեմքով և թիկունքով դեպի պատը:
- Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 3/01 և 3/22 տեղամասերում ևս քվեախցիկները սխալ են տեղադրված եղել, ինչը վիճաբանության տեղիք է տվել: Ժամը 10:00-ից 11:00-ի սահմաններում երկու տեղամասերում էլ քվեախցիկների դասավորությունը փոխվել է՝ ըստ ԸՕ պահանջի:
- Ավանի թիվ 1/01 տեղամասային կենտրոնը տեղակայված էր խիստ նեղ, քվեարկությունը կազմակերպելու համար անհարմար տարածքում, այդ պատճառով քվեարկության խցիկները տեղադրված են եղել ոչ սահմանված կարգով, չի պահպանվել քվեարկության գաղտնիության պարտադիր պայմանը: